



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԹԵՐԱԿԱՅԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Երևան
Հեղինակային հրատարակություն
2018**

ՀՏԴ 343
ԳՄԴ 67-408
Ղ 301

Ղամբարյան Ա.

Ղ 301 Քննչական գործողություններին ընթերակայի մասնակցության հարցերը Հայաստանի Հանրապետությունում: / Ա. Ղամբարյան Եր.: Հեղ. հրատ., 2018. 24 էջ:

ՀՏԴ 343
ԳՄԴ 67-408

ISBN 978-9939-0-2642-8

© Ղամբարյան Ա., 2018

Բովանդակություն

1. Ներածություն.....	4
(a) Պատմական համառոտ ակնարկ.....	4
(b) Դոկտրինալ համառոտ վերլուծություն.....	4
(c) Իրավահամեմատական համառոտ վերլուծություն.....	5
(d) Բարեփոխումները հայկական իրականությունում.....	7
(e) Չլուծված հարցեր.....	7
2. Քննչական գործողություններ կատարելիս տեխնիկական միջոցների կիրառմանը ներկայացվող օրենսդրական պահանջները.....	9
(a) Դատավարական ձևապաշտությունը և ՀՀ քր. դատ. օր- ի վերաճումը կրիմինալիստիկայի դասագրքի.....	9
(b) Տեսաձայնագրառման ընդհատումը քննչական գոր- ծողությունն ընդհատելու հիմք է.....	11
(c) Տեսաձայնագրառման նյութերը ենթակա չեն մոն- րաժման կամ այլ կերպ փոփոխության.....	13
3. Քննչական գործողություններին ընթերակայի մաս- նակցության դեպքերի սահմանափակումը.....	15
(a) Ընդհանուր դրույթներ.....	15
(b) Քննչական գործողություններ, որոնց ընթերակայի մասնակցությունը պարտադիր է.....	15
(c) Քննչական գործողություններ, որոնց ընթացքը պար- տադիր տեսաձայնագրառվում է.....	16
(d) Քննչական գործողություններ, որոնց մասնակցում են մասնագետները կամ փորձագետներ.....	16

- (e) Քննչական գործողություններ, որոնց ընթերակա չի մասնակցում և դրանց ընթացքը չի տեսաձայնագրառվում.....18
- (f) Փաստաթղթի կամ առարկայի զննություն, որին ընթերակա չի մասնակցում.....18

4. Փաստաթուղթ կամ առարկա ներկայացնելը.....19

- (a) Ընդհանուր դրույթներ.....19
- (b) Փաստաթուղթը կամ առարկան պահանջելը դատարարական որոշմամբ, թե՞ գրությամբ.....22

1. Ներածություն

(a) *Պատմական համառոտ ակնարկ:* Ընթերակայի ինստիտուտը քրեական դատավարության առավել հին ինստիտուտներից է, որը գոյություն ունի մոտ 4 դար և առաջին անգամ ամրագրվել է 1649թ. ռուսական Եկեղեցական օրենսգրքում: Մինչ վերջերս ընթերակայի ինստիտուտը որևէ էական բարեփոխումների չի ենթարկվել, այն պարագայում, երբ քրեական դատավարության գիտության մեջ և գործնականում մշտապես քննարկվել է այն արմատապես վերանայելու անհրաժեշտությունը¹: Ընթերակայի ինստիտուտը կարող էր առաջադիմական համարվել միայն ինկվիզիցիոն դատավարության ժամանակ, ինչպես այն տեղի է ունեցել 1649թ.:

(b) *Դոկտրինալ համառոտ վերլուծություն:* Դատավարագետները և պրակտիկ իրավաբանները պնդում են, որ մրցակցային դատավարության պայմաններում ընթերակայի ինստիտուտը, որպես ապացույցների հավաստիության ապահովման յուրահատուկ միջոց, կորցրել է իր արդիականությունը²: Դատավարագետների բացարձակ մեծամասնությունը կողմ է ընթերակայի ինստիտուտի վերացմանը կամ դրա կիրառության ոլորտի էական սահմանափակմանը³: Տեսության մեջ նշվում է, որ քննչական գործողությունների իրականացմանը որպես ընթերակա ցանկացած չչափազրգոված անձի ներգրավումն ունի նաև բարոյական

¹ Хитрова О.В. Участие понятых в российском уголовном судопроизводстве. М.: Спарк. 1998. С. 79.

² Калугин А. Понятый в уголовном процессе // Российская юстиция. 1998. № 10. С. 11, Загвоздкин Н. Н. Об участии понятых в российском уголовном процессе // Дальневосточные криминалистические чтения. Вып. 4: Сб. науч. тр. Владивосток: Изд-во Дальневосточ. ун-та, 1999. С. 58 - 59.

³ Михайлов А. Институт понятых - архаизм российского судопроизводства // Законность. 2003. № 4. С. 29 - 31, Белоусов А.В. О необходимости изменений в институте понятых // Прокурорская и следственная практика. 2003. № 3. С. 104 - 106, Кожевников И. Н. Упорядочить полномочия следователя // Российская юстиция. 1997. № 12. С. 22 - 24.

տեսանկյուն: Բարոյական է արդյո՞ք ստիպել քաղաքացիներին ամենայն մանրամասնությամբ զննել այլանդակված դիակը, որի տեսքը գարշանք է առաջացնում անգամ փորձառու մասնագետների մոտ⁴: Առավել նպատակահարմար է այս գործողությունները կատարել միայն դատաբժշկության բնագավառի մասնագետի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այլ մասնագետի մասնակցությամբ⁵:

(c) Իրավահամեմատական համառոտ վերլուծություն: Հետխորհրդային պետությունների քրեական դատավարություններում նկատվում է ընթերակայի ինստիտուտի կիրառման ոլորտի սահմանափակման միտում: Այսպես՝ Ուկրաինայի քրեական դատավարության նոր օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ քննիչը, դատախազը պարտավոր են հրավիրել երկուսից ոչ պակաս անձանց այնպիսի քննչական գործողությունների կատարման ժամանակ, ինչպիսիք են՝ անձին, դիակը կամ առարկաները ճանաչման ներկայացնելը, դիակի զննությունը, այդ թվում նաև արտաշիրմումը, քննչական փորձարարությունը և քննումը:

Վրաստանի քրեական դատավարության նոր օրենսգրքի 331-րդ հոդվածը նախատեսում է քննչական գործողություններին ընթերակայի մասնակցության երկու դեպք՝ խուզարկություն և առգրավում: Նույն հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ մինչև քննչական գործողություն սկսելը մեղադրյալին տրվում է 1 ժամվա ընթացքում ընթերականեր հրավիրելու հնարավորություն, իսկ 4-րդ մասը հնարավորություն է տալիս կյանքին և առողջությանը իրական վտանգ սպառնալու և ապացույցների վնասման, ոչնչացման կամ հանցագործության հետքերը թաքցնելու իրական վտանգի առկայության դեպքում քննչական գործողությունները կատարել առանց ընթերակաների:

⁴ Камынин И. Д. Допустимость доказательств // Уголовный процесс. 2006. № 4. С. 64.

⁵ Шарун В. В. Организационно-тактические особенности производства отдельных следственных действий с участием понятых. Автореф. дисс. канд. юрид. наук. Калининград, 2007. С. 18.

Ռուսաստանի Դաշնությունում 2013 թվականի մարտի 15-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով ընթերակաների պարտադիր մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների թիվը կրճատվել է չորսի՝ բնակարանի և այլ շինությունների խուզարկությունը, տեղեկություն պարունակող էլեկտրոնային կրիչի առգրավումը, անձնական խուզարկությունը, անձին, առարկաները և դիակը ճանաչման ներկայացնելը: Քննիչի **հայեցողությամբ** ընթերականեր կարող են ներգրավվել հետևյալ քննչական գործողություններին՝ գույքի վրա կալանք դնելու, դեպքի վայրը տեղանքը, շինությունները, առարկաները, փաստաթղթերը զննելու, դիակը զննելու, արտաշիրմման, առգրավման՝ բացառությամբ տեղեկություն պարունակող էլեկտրոնային կրիչի առգրավումամբ, քննչական փորձարարությունը, նամակագրությունը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները զննելու, առգրավման և դրանց պատճենները վերցնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, ցուցմունքները տեղում ստուգելու դեպքերում:

ՌԴ քր. դատ. օր-ը քննիչին հնարավորություն է տալիս դժվարամատչելի վայրերում, հաղորդագրության համապատասխան միջոցների բացակայության դեպքում, ինչպես նաև կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում քննչական գործողությունները կատարել առանց ընթերակաների, ինչի մասին քննիչն արձանագրության մեջ կատարում է համապատասխան գրառում և այն ստորագրում է: Քննչական գործողություններին ընթերակա չներգրավելու դեպքում քննիչը քննչական գործողության ողջ ընթացքը տեսանկարահանում է: Իսկ եթե նման պայմաններում հնարավոր չէ օգտագործել տեխնիկական միջոց, ապա քննիչը արձանագրության մեջ համապատասխան նշում է կատարում:

Ընթերականների մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների թիվը կրճատվել է նաև Ղազախստանի նոր քր. դատ. օր-ում, ըստ որի՝ ընթերականները մասնակցում են բնակարանի զննությանը, խուզարկությանը, անձնական խուզարկությանը: Իսկ Ղրղզստանի նոր քր. դատ. օր-ում (ուժի մեջ է մտնելու 2019թ. հունվարի 1-ից) ընթերակայի ինստիտուտ նախատեսված չէ:

(d) Բարեփոխումները հայկական իրականությունում: ՀՀ քննչական կոմիտեն 2014թ. նախաձեռնեց ընթերակայի ինստիտուտը բարեփոխելու վերաբերյալ օրենսդրական գործընթաց: Նախագիծը քննարկվել է ոչ միայն շահագրգիռ գերատեսչությունների, այլև իրավաբան գիտնականների (ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆ., Ս. Դիլբանդյան, ՌՀՀ քրեական իրավունքի և դատավարության ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆ. Ս. Ծաղիկյան, ՀՀ ԳԱԱ բաժնի վարիչ, ի.գ.դ., պրոֆ., Հ. Ստեփանյան, Խ. Աբովյանի անվան Մանկավարժական պետական համալսարանի պրոռեկտոր, ի.գ.թ Ա. Երեմյան, Պետական կառավարման ակադեմիայի դոցենտ, ի.գ.թ Թ. Շաքարյան և այլն), ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի փորձագետների հետ, որոնց առաջարկությունների հիման վրա Նախագիծը լրամշակվել է:

ՀՀ Ազգային ժողովը 21.03.2018թ. ընդունել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը, որով սահմանափակվեցին քննչական գործողություններին ընթերակայի մասնակցության դեպքերը և նախատեսվեց քննչական գործողությունների կատարման ընթացքում տեխնիկական միջոցների կիրառմանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

(e) Չլուծված հարցեր: Դեռևս լուծված չէ ընթերակա հրավիրելու հարցը: Ընթացիկ օրենսդրությամբ նախատեսված չէ ընթերականների ներգրավման ինստիտուցիոնալ համակարգ,

բացակայում է որևէ տեղեկատվական համակարգ, որի հիման վրա հնարավոր կլիներ հրավիրել ընթերականների, բացակայում է ընթերականների մասնակցությամբ պայմանավորված նրանց ծախսերի հատուցման մեխանիզմները:

Ընթերականների ներգրավման ինստիտուցիոնալ համակարգի և ընթացակարգերի բացակայությունը էապես բարդացնում է քննիչների և հետաքննության մարմնի աշխատակիցների կողմից ընթերակա հրավիրելու աշխատանքի կազմակերպումը, ինչը բացասաբար է ազդում աշխատանքի արդյունավետության վրա: Ընթերակայի հրավիրելու ինստիտուցիոնալ համակարգի բացակայությունը պարունակում է նաև կրիմինոգեն դիսկեր, քանի որ գործնականում հանդիպում են գոյություն չունեցող «ընթերականների» ներգրավման դեպքեր⁶:

⁶ Վարձու և գոյություն չունեցող ընթերականները քննչական գործողություններում: Առավոտ, Հոկտեմբեր 27 2014, Վարդան Պետրոսյանի գործով ընթերակայի մասին տեղեկություններ չկան: ՖաստինՖո, 04/26/2014, Վկային հարցաքննել են ռեստորանում, ավտոբուսն էլ «բերման են ենթարկել» ու «պահ տվել» ոստիկանության շենքին: Տեսանկյուն, 29-07-2015 և այլն:

2. Քննչական գործողություններ կատարելիս տեխնիկական միջոցների կիրառմանը ներկայացվող օրենսդրական պահանջները

(a) *Դատավարական ձևապաշտությունը և ՀՀ քր. դատ. օր-ի վերաճումը կրիմինալիստիկայի դասագրքի:* Նկատի ունենալով, որ քննչական մի շարք գործողություններին ընթերակայի մասնակցության փոխարեն նախատեսվել է գործողությունների կատարման ընթացքի տեսաձայնագրառում, ուստի այս բարեփոխումների շրջանակում սահմանվեց տեխնիկական միջոցների կիրառմանը ներկայացվող հետևյալ լրացուցիչ օրենսդրական պահանջները.

1) հետաքննության մարմինը կամ քննիչը տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ ստուգում է դրանց սարքինությունը.

2) տեսաձայնագրառման դեպքում ապահովվում են քննչական գործողության ընթացքի ամբողջականությունը, տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և լսելիությունը:

Ընդ որում ՀՀ քր. դատ. օր-ով ամրագրվեց նաև, որ դատավարական գործողությունների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նշենք, որ քննչական գործողություններ կատարելիս տեխնիկական միջոցների կիրառմանը ներկայացվող կրիմինալիստիկական բնույթի, նույնիսկ պարզ մարդկային տրամաբանության հարթությունում գտնվող վերը նշված պահանջները Նախագծի սկզբնական տարբերակում նախատեսված չէին: Նախագծի քննարկման շրջանակներում, որոշ մասնագետներ, զուտ խոսք հնչեցնելու համար, առաջարկեցին օրենքով սահմանել, թե վարույթն իրականացնող մարմինը ինչպես պետք է տեսաձայնագրառի, որպեսզի ամեն

ինչ տեսանելի կամ լսելի լինի: Ըստ նրանց՝ պետք է օրենքով պահանջել՝ քննիչ դիակը ճանաչման ներկայացնելիս այնպես տեսաձայնագրադի, որպեսզի տեսանելի լինեն ոչ միայն դիակի ոտքերը, այլ նաև դեմքը ...: Կարծում ենք, որ նման պարզունակ առաջարկությունների հիմքում ընկած է մի կողմից՝ առաջարկողների կրեատիվ մտածողության դեֆիցիտը, մյուս կողմից՝ քրեական դատավարության նկատմամբ վիրավորանքի հասնող ֆորմալացված մտածողությունը: Այնուամենայնիվ ՀՀ գործադիր իշխանությունը որոշեց, որ այս տեսակի հարցերը պետք է կարգավորել օրենքով, ավելին՝ դեռևս ՀՀ կառավարությունը պետք է սահմանի քննչական գործողություններ կատարելիս տեխնիկական միջոցների օգտագործման կարգ: Դժվար եմ պատկերացնում, թե ՀՀ կառավարության որոշմամբ էլ ինչ հարցեր կարելի է կարգավորել (նկատի ունեմ այնպիսի կարևորության հարաբերությունները, որոնք կարող են կազմել ՀՀ կառավարության ենթաօրենսդրական ակտի կարգավորման առարկան), թեև վստահ եմ, որ կրեատիվ մտածողության դեֆիցիտն այս հարցում նույնպես իր խոսքը կասի: Այս կարևոր կոդիֆիկացված օրենսդրական ակտը (ՀՀ քր. դատ. օր-ը) նման դրույթներով ծանրաբեռնելով, կարելի է հասնել նրան, որ իրավաբանական ֆակուլտետների ուսանողները կունենան նորմատիվ իրավական ակտի ձևաչափով կրիմինալիստիկայի դասագիրք:

Նման ծայրահեղ ձևապաշտական մոտեցումը ունի նաև պատմական հիմքեր: Անցյալի նկատմամբ ունեցած մեր վախերը, իրավապահ համակարգի նկատմամբ հասարակական անվստահությունն առաջացրել է մեկ այլ ծայրահեղ մոտեցում: Դատավարագետների ու իրավաբանների մոտ գերիշխում է այն մոտեցումը, որ քրեական հետապնդման մարմինների ապօրինի գործողությունները կանխելու, մարդու իրավունքները երաշխավորելու համար պետք է հնարավորինս մանրամասն կարգավորել նրանց գործողությունները: Ընդ

որում, հաճախ այս կամ այն դատավարական գործողությունները կատարելու համար առաջարկվում է այնպիսի մանրամասն կարգավորումներ, որը նույնիսկ կարող է ծիծաղ առաջացնել, ընդհուպ չեմ բացառում, որ դատավարական ձևապաշտությամբ տառապողները կարող են մեկ օր էլ առաջարկեն, թե քննիչը, օրինակ՝ բնակարանի խուզարկություն սկսելուց առաջ ինչպես «պետք է թակի բնակարանի դուռը, որպեսզի այն լսելի լինի բնակարանում գտնվող անձանց համար»:

Հայաստանում դատավարական ֆորմալիզմը ոչնչացրել է ինքնուրույն մտածող քննիչի, դատախազի, դատավորի տեսակը, ոչ ստանդարտ իրավիճակներում իրավական լուծումներ գտնելու հմտությունները: Ավելին՝ չարդարացված ֆորմալիզմն այնքան է ներծծվել հայ դատավորի, դատախազի, քննիչի գիտակցության մեջ, որ նույնիսկ նա վախենում է օրենքով իրեն տրված հայեցողությունից, նրա առավել համար հարմարավետ է և «անվտանգ է» գործել զուտ օրենքով տրված ֆորմալ պահանջներով, իսկ օրենքով չսահմանված՝ ոչ ստանդարտ իրավիճակներում, նույնիսկ պատրաստ է հրաժարվել իր գործառույթներից, քան կիրառել օրենքի կամ իրավունքի անալոգիա: Դատավարական պրագմատիզմը կարող է իր տեղը զիջել որոշակի իմաստով բարդացված դատավարական ձևին, եթե այն պայմանավորված է մարդու իրավունքների իրական պաշտպանության, արդարադատությանը հասարակությանը մասնակցության իրական ապահովման գաղափարներով:

(b) Տեսաձայնագրառման ընդհատումը քննչական գործողությունն ընդհատելու հիմք է: ՀՀ քր. դատ. օր-ի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Տեսաձայնագրառումը պետք է իրականացվի քննչական գործողություն սկսելու պահից, առանց ընդհատման, բացառությամբ անկանխատեսելի տեխնիկական անսարքության կամ այլ օբյեկտիվ պատճառների առկայության դեպքերի: Տեսաձայնագրառման ընդհատման

դեպքում քննչական գործողությունն ընդհատվում է, որի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն, որտեղ նշվում են ընդհատման պատճառների մասին: Քննչական գործողության կատարումը շարունակվում է տեսաձայնագրառումը վերսկսելու պահից: Մինչ այդ հետաքննության մարմինը կամ քննիչը միջոցներ է ձեռնարկում քննչական գործողության կատարման վայրը, հետքերը և առարկաները պահպանելու ուղղությամբ»: Այս նորմի մեկնաբանման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների վրա.

Առաջին՝ եթե վարույթն իրականացնող մարմինը իր նախաձեռնությամբ կամ օրենքի պահանջով որոշել է քննչական գործողության կատարման ընթացքը տեսաձայնագրել, ապա չի կարող որևէ պատճառով դադարեցնել տեսաձայնագրառումը, իսկ քննչական գործողությունը շարունակել՝ առանց տեսաձայնագրառման: Հատկապես, եթե օրենքով պահանջվում է քննչական գործողության ընթացքը տեսաձայնագրառել, ապա անթույլատրելի է քննչական գործողության որևէ փուլում տեսաձայնագրառումն ընդհատել և գործողությունը շարունակել առանց տեսաձայնագրման:

Երկրորդ՝ հասկանալի է, որ քննչական գործողության կատարման ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի անկանխատեսելի տեխնիկական կամ օբյեկտիվ այլ պատճառներ, որոնք բացառում են տեսաձայնագրառումը: Նման հիմքերի առկայության դեպքում քննչական գործողությունը նույնպես ընդհատվում է: Եթե տառացի մեկնաբանենք օրենսդրական դրույթը, ապա տեսաձայնագրառման և քննչական գործողության ընդհատումը հարգելի է (կամ թույլատրելի է), եթե այն պայմանավորված է բացառապես *անկանխաբեսելի* տեխնիկական անսարքությամբ, ուստի պահանջվում է վարույթն իրականացնող մարմնից քննչական գործողությանը պատշաճ նախապատրաստվել:

Երրորդ՝ տեսաձայնագրառման և քննչական գործողության ընդհատման դեպքում կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում են տեսաձայնագրառման ընդհատման պատճառները:

Ի դեպ նշենք, որ օրենսդրական այս փոփոխություններով ՀՀ քրեական դատավարություն ներմուծվեց «քննչական գործողության ընդհատում» դատավարական հասկացությունը⁷: Ընդ որում, քրեական դատավարության գիտության մեջ քննչական գործողության «ընդհատում», «կասեցում», «դադարեցում» հասկացությունները ուսումնասիրված չեն: Բացառություն են կազմում եզակի գիտական աշխատանքները, որտեղ հեղինակներն անդրադառնում են քննչական գործողությունների վաղաժամկետ ընդհատման և կասեցման հարցերին⁸:

(c) Տեսաձայնագրառման նյութերը ենթակա չեն մոնիթինգի կամ այլ կերպ փոփոխության: Օրենքով ուղղակի արգելվում է տեսաձայնագրառման մոնիթինգը կամ այլ կերպ փոփոխելը: Նման դրույթ նախատեսելու առաջարկ ներկայացրել էր ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը հետևյալ հիմնավորմամբ. «Տեսագրված ապացույցները նույնպես կարելի է փոփոխել կամ մոնիթինգ, ուստի՝ հնարավոր է, որ տեսագրությունը ոչ միշտ ներառի քննչական գործողության ողջ ընթացքի տեսադիտարկումը: Ավելին, որոշակի իրավիճակներ կարող են բեմականացվել, այսինքն՝ ապացույցները կարող են իշխանությունների կողմից տեղակայվել նախքան տեսախցիկի կողմից տեսագրությունը սկսելը, կամ՝ տեսանյութը կարող է մոնիթինգից ախտահարվել, որպեսզի փաստերը ներկայացվեն քննիչների նախընտրած ձևով: Դրանից կարելի է խուսափել՝

⁷ ՀՀ քր. դատ. օր-ի 205.1-րդ հոդվածում ամրագրված է ժամկետը լրանալու հիմքով հարցաքննության ընդհատման հնարավորություն:

⁸ Стельмах В. Ю. Концептуальные основы следственных действий. М.: Юрлитинформ. 2017. С. 192-201.

օրենքով պահանջելով, որպեսզի քննության համար կատարվող տեսագրությունը լինի չընդհատված և չմոնտաժված»⁹:

Քննչական գործողությունների տեսաձայնագրառման նյութերի մոնտաժված կամ այլ կերպ փոփոխության ենթարկված լինելը վերաբերում է տեսաձայնագրառման բովանդակության փոփոխությանը: Օրենքում օգտագործվող «մոնտաժ» իրավաբանական հասկացությունը կարող է տարբերվել դրա տեխնիկական ընկալումից¹⁰:

Քննչական գործողությունների տեսաձայնագրառման նյութերը մոնտաժված լինել-չլինելու հարցի լուծումը պահանջում է հատուկ գիտելիքներ, ուստի համապատասխան հիմքերի առկայության դեպքում պետք է նշանակվի փորձաքննություն: Ընդ որում, փորձագետները իրենց եզրակացության մեջ տեսաձայնագրառության նյութը չպետք է որակեն որպես մոնտաժված կամ այլ կերպ փոփոխության ենթարկված, եթե տեսաձայնագրառումը օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընդհատվել է և դրա վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Տեսաձայնագրառման նյութերի պատճենահանումը և այլ նյութական կրիչի վրա փոխանցելը նույնպես չպետք է դիտել որպես փոփոխության ենթարկված նյութ, քանի որ այն չի վերաբերում տեսաձայնագրառման բովանդակությանը:

⁹ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների նախագծի վերաբերյալ եզրակացություն: <https://www.osce.org/hy/odihr/313256?download=true>

¹⁰ Մոնտաժ (ֆր. montage) - կինոմատոգրաֆիայի, հեռուստատեսության կամ ձայնագրության ստուդիաներում իրականացվող ստեղծագործական և տեխնիկական գործընթաց, որը հնարավորություն է տալիս ձայնագրությունների առանձին մասերը միացնելու արդյունքում ստանալ միասնական կոմպոզիցիոն ամբողջական արտադրանք: Տե՛ս Энциклопедия. Фотокинетехника. Под ред. Е. А. Иофиса. Изд. Советская энциклопедия. 1981. С. 194.

3. Քննչական գործողություններին ընթերակայի մասնակցության դեպքերի սահմանափակումը

(a) Ընդհանուր դրույթներ: Օրենսդրական այս փոփոխությունների ընթացքում ընթերակայի մասնակցության հետ կապված քննչական գործողությունները կարելի է միավորել հետևյալ խմբերում՝

1) քննչական գործողություններ, որոնց ընթերակայի մասնակցությունը պարտադիր է,

2) քննչական գործողություններ, որոնց ընթացքը միայն տեսաձայնագրառվում է,

3) քննչական գործողություններ, որոնց ընթերակայի փոխարեն մասնակցում են գործի ելքով չչահագրգռված մասնագետը կամ փորձագետը,

4) քննչական գործողություններ, որոնց ընթերակա չի մասնակցում և դրանց ընթացքը չի տեսաձայնագրառվում:

(b) Քննչական գործողություններ, որոնց ընթերակայի մասնակցությունը պարտադիր է: Քննչական գործողությունների առաջին խմբին են պատկանում այն դատավարական գործողությունները, որոնց ընթերակայի մասնակցությունը պարտադիր է: Մինչև օրենսդրական փոփոխություններն ընթերակայի մասնակցությունը պարտադիր էր հետևյալ քննչական գործողություններին՝ զննմանը, արտաչիրմմանը, քննմանը, դիակը, անձին կամ առարկաները ճանաչման ներկայացնելուն, խուզարկությանը և ազգրավմանը, նմուշներ ստանալուն, քննչական փորձարարությանը, հեռախոսային խոսակցությունների ձայնագրված ժապավենի զննմանը և լսմանը, նամակագրության զննմանը և առգրավմանը:

Նոր օրենսդրական կարգավորմամբ ընթերակայի մասնակցությունը պարտադիր է քննչական փորձարարությանը, անձին կամ առարկաները ճանաչման ներ-

կայացնելուն, խուզարկությանը, առգրավմանը, զննմանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

(c) *Քննչական գործողություններ, որոնց ընթացքը պարտադիր տեսաձայնագրառվում է:* Քննչական գործողությունների երկրորդ խմբին են պատկանում այն դատավարական գործողությունները, որոնց ընթերակա չի մասնակցում, սակայն դրանց ընթացքը պարտադիր տեսաձայնագրառվում է: Այդ քննչական գործողություններն են դիակը ճանաչման ներկայացնելը և արտաշիրմումը: Ընդ որում, դիակը ճանաչման ներկայացնելուն կարող է մասնակցել նաև մասնագետ, իսկ արտաշիրմումը կատարվում է դատաբժշկության բնագավառի մասնագետի, իսկ անհրաժեշտության դեպքում այլ մասնագետի մասնակցությամբ:

(d) *Քննչական գործողություններ, որոնց մասնակցում են մասնագետները կամ փորձագետները:* Քննչական գործողությունների երրորդ խմբին են պատկանում այն դատավարական գործողությունները, որոնց մասնակցում է գործի ելքով չչափագրգոված փորձագետը կամ մասնագետը: Այդ քննչական գործողություններն են՝

1) քննումը, որը կատարվում է բժշկի կամ դատաբժշկության բնագավառի մասնագետի մասնակցությամբ: Եթե քննումը չի զուգորդվում քննվող անձին մերկացնելու հետ, ապա քննվող անձի համաձայնությամբ նրա մարմնի վրա առկա հանցագործության հետքերը կամ հատուկ նշանները լուսանկարահանվում կամ տեսաձայնագրառվում են:

2) մարդուց նմուշ ստանալը, որը կատարվում է փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ: Ընդ որում, սերմնահեղուկի, մաշկի մանրադիտակային քերվածքների, քրտինքի և այլ արտաթորանքների նմուշներ ստանալը կատարվում է միևնույն սեռին պատկանող փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ:

3) դիակի, կենդանու, նյութի և այլ օբյեկտների հատկությունները բնութագրող նմուշների ստացումը կատարվում է

փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ և (կամ) տեսաձայնագրառմամբ: Այս դեպքում տեսաձայնագրառումը հարաբերական այլընտրանքային է, քանի որ հնարավոր է երեք տարբերակ՝

Առաջին տարբերակ՝ նմուշների ստացմանը մասնակցում է փորձագետը կամ մասնագետը՝ առանց տեսաձայնագրառման,

Երկրորդ տարբերակ՝ նմուշների ստացմանը փորձագետ կամ մասնագետ չի մասնակցում, սակայն դրա ընթացքը տեսաձայնագրառվում է,

Երրորդ տարբերակ՝ նմուշների ստացմանը մասնակցում է փորձագետ կամ մասնագետ և դրա ընթացքը միաժամանակ տեսաձայնագրառվում է:

Եթե ամփոփենք քննչական գործողությունների ընթացքը տեսաձայնագրառելու դեպքերը, ապա կարելի է առանձնացնել դրա հետևյալ տեսակները՝

1) *պարտադիր տեսաձայնագրառում:* Այն պարտադիր է դիակը ճանաչման ներկայացնելու և արտաշիրման դեպքում,

2) *հայեցողական տեսաձայնագրառում:* Քննման դեպքում քննչական գործողությունը կարող է տեսաձայնագրառել (լուսանկարահանել), եթե այն չի զուգորդվում քննվող անձին մերկացնելու հետ և առկա է անձի համաձայնությունը: Այս դեպքում տեսաձայնագրառելու որոշում կայացնելու հայեցողության կրողը ոչ թե քննիչն է, այլ այն անձը, ում մարմինը քննվում է:

3) *հարաբերական այլընտրանքային տեսաձայնագրառում:* Դիակի, կենդանու, նյութի և այլ օբյեկտների հատկությունները բնութագրող նմուշների ստացումը փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ և (կամ) տեսաձայնագրառմամբ:

Ասվածը չի նշանակում, որ վարույթն իրականացնող մարմինը այլ քննչական գործության ընթացքը չի կարող տեսաձայնագրառել: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է պարտադիր տեսաձայնագրառմանը, իսկ մնացած այլ դեպքերում վարույթն իրականացնող մարմինը ունի ցանկացած

քննչական գործողության ընթացքը տեսաձայնագրառելու ընդհանուր լիազորություն:

(e) Քննչական գործողություններ, որոնց ընթերակա չի մասնակցում և դրանց ընթացքը չի տեսաձայնագրառվում: Քննչական գործողությունների երրորդ խմբին են պատկանում այն դատավարական գործողությունները, որոնց ընթերակա չի մասնակցում և օրենքով նախատեսված չէ այդ գործողությունների ընթացքի պարտադիր տեսաձայնագրառման պահանջ: Այս խմբի մեջ մտնում են զննության հետևյալ տեսակները՝

1) փաստաթուղթը կամ առարկան զննելը, որը կատարվում է այն ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ, և փաստաթուղթը (կամ դրա պատճենը) կամ առարկան կցված է քրեական գործին.

2) կապի օպերատորներից ստացված մուտքային և (կամ) ելքային հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների (sms) վերձանումների, բաժանորդների տվյալների, հեռախոսազանգերն սպասարկած ալեհավաք կայանների հասցեների մասին փաստաթղթերը կամ դրանց պատճենները զննելը, եթե դրանք կցված են քրեական գործին.

3) ՀՀ քր. դատ. օր-ի 241-րդ հոդվածով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված գործողությունների արդյունքում ձեռք բերված ձայնագրությունները զննելը, եթե դրանք կցված են քրեական գործին:

(f) Փաստաթղթի կամ առարկայի զննությունը, որին ընթերակա չի մասնակցում: Փաստաթղթի կամ առարկայի զննությանն ընթերակա չի մասնակցում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) փաստաթուղթը կամ առարկան ձեռք է բերվել **ներկայացնելու եղանակով,**

2) զննությանը մասնակցում է այն ներկայացրած անձը կամ ներկայացուցիչը,

3) փաստաթուղթը (դրա պատճենը) կամ առարկան կցված է քրեական գործին:

Նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթղթի կամ առարկայի զննությանը ընթերակայի մասնակցությունը պարտադիր է: Օրինակ՝ առարկայի զննությանն ընթերակայի մասնակցությունը պարտադիր է, եթե առարկան ներկայացրել է մասնավոր անձը, սակայն նա հրաժարվում է մասնակցել իր ներկայացրած առարկայի զննությանը, կամ թեև անձը ներկայացրել է առարկան և մասնակցել է դրա զննությանը, սակայն առարկան հնարավոր չէ կցել քրեական գործին:

4. Փաստաթուղթ կամ առարկա ներկայացնելը

(a) Ընդհանուր դրույթներ: Ինչպես նշվեց, փաստաթղթի կամ առարկայի զննությանն ընթերակա չի մասնակցում, եթե այն ներկայացրել է ֆիզիկական կամ իրավաբանական անձը: ՀՀ քր. դատ. օր-ը նախատեսում է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նյութեր ներկայացնելու իրավունքը, իսկ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի և դատախազի համար՝ նյութեր պահանջելու լիազորությունը:

Հնարավոր է ֆիզիկական և իրավաբանական անձի կողմից նյութեր ներկայացնելու հետևյալ իրավիճակները:

Առաջին՝ անձը փաստաթուղթը կամ առարկան ներկայացնում է իր նախաձեռնությամբ: Անձի նախաձեռնությամբ փաստաթուղթը կամ առարկան կարելի է ներկայացնել դիմումով, որի դեպքում վարույթն իրականացնող մարմինը կազմում է փաստաթուղթ կամ առարկա ներկայացնելու մասին առանձին արձանագրություն կամ պարզապես նյութերի զննության արձանագրությունում պարտադիր նշում է դրանք դիմումով ներկայացնելու մասին:

Երկրորդ՝ անձը փաստաթուղթը կամ առարկան ներկայացնում է վարույթն իրականացնող մարմնի պահանջով: Նախապես նշենք, որ օրենքով թեև նախատեսված է վարույթի հանրային մասնակիցների կողմից նյութեր պահանջելու լիազորությունը, սակայն դատավարական այս գործողության ընթացակարգը սահմանված չէ: Նյութեր պահանջելու հատուկ դատավարական կարգի բացակայությունը հանգեցրել է նրան, որ այս 20 տարիների ընթացքում նյութեր պահանջելու մասին դրույթը գործնականում չի կիրառվել կամ կիրառվել է եզակի դեպքերում: Ընդ որում՝ նյութեր պահանջելը փոխարինվել է խուզարկությամբ կամ առգրավմամբ: Զավեշտն այն է, որ գործնականում վարույթն իրականացնող մարմինը հաճախ կայացնում է նյութեր առգրավելու մասին որոշում, նախապես այն ուղարկում է հասցեատիրոջը և հայտնում, որ մի քանի օր անց կատարելու է առգրավում:

Հանրահայտ է, որ նյութեր պահանջելը և առգրավելն ապացույց հավաքելու ինքնուրույն գործողություններ են¹¹: Այսպես՝ վարույթն իրականացնող մարմինը նյութեր պահանջելու լիազորությունից օգտվում է, եթե՝

1) հստակ հայտնի է, թե ինչ փաստաթուղթ կամ առարկա է անհրաժեշտ, այն ում մոտ է և (կամ) որտեղ է գտնվում,

2) չկա վտանգ, որ անձը կարող է փաստաթուղթը կամ առարկան թաքցնել, ոչնչացնել կամ վնասել:

Օրինակ՝ վարույթն իրականացնող մարմինը հարկային մարմնից պահանջում է հարկային գործ, եթե չկա վտանգ, որ հարկային մարմնի աշխատակիցը կարող է այն ոչնչացնել կամ վնասել, հակառակ դեպքում նա պետք է որոշում կայացնի առգրավում կամ խուզարկություն կատարելու մասին, ընդ

¹¹ Семенцов В. А. Следственные действия в досудебном производстве. М.: Юрлитинформ. 2017. С.102-122, Попов А. П. Регламентация представления доказательств в уголовно-процессуальном законодательстве государств на постсоветском пространстве // Библиотека криминалиста. № 3. 2018.

որում՝ առանց նախապես տեղեկացնելու առգրավման կամ խուզարկության մասին:

Առգրավման և նյութեր պահանջելու այս ընդհանուր տարբերություններին ներկայումս ավելացել է նաև ընթերակայի մասնակցության տարբերակումը: Եթե վարույթն իրականացնող մարմինը փաստաթուղթը կամ առարկան առգրավել է, ապա դրանց զննությանն ընթերակայի մասնակցությունը պարտադիր է, իսկ եթե նա փաստաթուղթը կամ առարկան պահանջել է և դրանք ներկայացվել են, ապա դրանց զննությանն ընթերակա չի մասնակցում (օրենքով նախատեսված մյուս պայմանների դեպքում):

Երրորդ՝ անձը փաստաթուղթը կամ առարկան ներկայացնում է այլ քննչական գործողություններ կատարելու ընթացքում, օրինակ՝ հարցաքննության, քննման կամ դեպքի վայրի զննության ընթացքում: Քննչական գործողությունների կատարման ընթացքում ներկայացված փաստաթղթի կամ առարկային զննությանն ընթերակայի մասնակցության հարցը որոշելու համար պետք է առանձնացնել հետևյալ իրավիճակները:

1) փաստաթուղթը կամ առարկան ներկայացվել է այնպիսի քննչական գործողությունների շրջանակներում, որոնց առաջնային խնդիրը նյութեր հայտնաբերելու և (կամ) վերցնելու միջոցառումն է, օրինակ՝ խուզարկություն, առգրավում, դեպքի վայրի զննություն: Եթե փաստաթուղթը կամ առարկան ներկայացվել է այս տեսակի քննչական գործողությունների շրջանակներում և վարույթն իրականացնող մարմինը որոշել է դրանք զննել հետագայում (առանձին), ապա զննությանն ընթերակայի մասնակցությունը պարտադիր է:

2) փաստաթուղթը կամ առարկան ներկայացվել է այնպիսի քննչական գործողությունների շրջանակներում, որոնք նյութեր հայտնաբերելու և վերցնելու առաջնային խնդիր չունեն, օրինակ՝ տուժողը հարցաքննության կամ մարմնի քննման ժամանակ ներկայացնում է փաստաթղթեր կամ հագուստ: Այս

դեպքում վարույթն իրականացնող մարմինը հարցաքննության կամ քննման արձանագրության մեջ նշում է փաստաթուղթ կամ առարկա ներկայացնելու մասին, որից հետո կատարում է դրանց զննություն, որին ընթերակա չի մասնակցում:

(b) Փաստաթուղթը կամ առարկան պահանջել դատավարական որոշմամբ, թե՞ գրությամբ: Ինչպես նշվեց, փաստաթուղթ կամ առարկա պահանջելը դիտվում է ապացույց հավաքելու ինքնուրույն եղանակ, սակայն օրենքով սահմանված չէ այս դատավարական գործողության կատարման կարգը: Կարծում ենք, որ այս գործողության կատարման հատուկ - իրավական ձևի բացակայության նյութեր պահանջելու օրենքով նախատեսված լիազորությունը պետք է իրականացվի քրեական դատավարության ընդհանուր դրույթների և սկզբունքների հիման վրա:

Գործնականում հաճախ հարց է տրվում՝ նյութերը պահանջել գրությամբ, թե՞ դատավարական որոշմամբ: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն եզակի դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմինը կիրառում է նյութեր պահանջելու լիազորությունը, ապա դա իրականացնում է գրությամբ:

Կարծում ենք, որ նյութերը գրությամբ, թե՞ դատավարական որոշմամբ պահանջելու հարցն ինքնին սկզբունքային չէ. կարևորը հարցի դատավարական ձևի և բովանդակային կողմն է: Անկախ նրանից, նյութերը կպահանջվեն գրությամբ, թե որոշմամբ, պետք է կարևորել ստորև նշվածները:

Առաջին՝ նախնական քննության փուլում նյութեր պահանջելու լիազորության կրողը վարույթն իրականացնող մարմինն է, և ոչ թե նրա վերադասը, ուստի նյութեր պահանջելու եղանակով ապացույց հավաքելու պատշաճ սուբյեկտը հետաքննության մարմնի աշխատակիցն է կամ քննիչը (<< Սահմանադրության տեսանկյունից դատախազությունն ապացույց հավաքող մարմին չէ): Մինչդեռ գործնականում գրության եղանակով նյութեր պահանջում է քննիչի

վերադասը, ինչը կարող է կասկածի տակ դնել ապացույցի թույլատրելիությունը: Այլ բան է, որ վարչա-րարության տեսանկյունից ցանկալի է նյութեր պահանջելու վերաբերյալ գրությունը կամ որոշումը հասցեատիրոջը ուղարկել քննիչի վարչական վերադասի ուղեկցական նա-մակով: Ընդ որում՝ նպատակահարմար է ուղեկցական նամակում նշել, որ քննիչի պահանջով նյութերը չներկայացնելը օրենքով սահմանված կարգով հարկադրաբար առգրավում կամ խուզարկություն կատարելու հիմք է:

Երկրորդ՝ վարույթն իրականացնող մարմնի պահանջը, անկախ նրանից դա արվում է գրությամբ, թե որոշմամբ, օրենքի ուժով պետք է մյուս կողմի համար առաջացնի նյութեր ներկայացնելու պարտականություն (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի): ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 5.1-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից իր լիազորությունների սահմաններում քրեական գործով **կայացված որոշումը ենթակա է պարտադիր կատարման** բոլոր կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից» (ընդգծումը՝ հեղ.): Ինչպես նկատում ենք՝ պոզիտիվ-իրավական նորմատիվության տեսանկյունից կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար պարտադիր է քննիչի որոշումը, այլ ոչ թե գրությունը: Ուստի գործող օրենսդրության պայմաններում գրությամբ նյութեր պահանջելը հասցեատիրոջ համար ինքնին պարտադիր չէ, ուստի այն չկատարելը չի կարող առաջացնել, օրինակ՝ քրեախրավական հետևանքներ: Կարծում ենք, որ նյութեր պահանջելու գործողությանը պոզիտիվ-իրավական պարտադիրությամբ օժտելու համար վարույթն իրականացնող մարմինը պետք է կայացնի նյութեր պահանջելու մասին որոշում, և ոչ թե գրություն:

Որոշմամբ նյութեր պահանջելու մոտեցման ընդդիմա-խոսները հաճախ նշվում են, որ օրենքով որոշման նման

տեսակ նախատեսված չէ: Կարծում ենք, որ այս մոտեցումը քննադատության չի դիմանում: Նախ՝ քր. դատ. օր-ը չի սահմանում և չպետք է սահմանի դատավարական որոշումների տեսակների սպառիչ ցանկը, քանի որ օրենքով սպառիչ սահմանվում են պաշտոնատար անձի դատավարական լիազորությունը, որի իրականացման կապակցությամբ պետք է կազմել համապատասխան դատավարական ակտ: Այլ կերպ ասած՝ դատավարական որոշումը ածանցյալ է դատավարական լիազորությունից: Բացի այդ, քր. դատ. օր-վ ուղղակի նախատեսված չէ նաև նյութերը գրությամբ պահանջելու մասին դրույթ: